դաքս, և խոպան ՉՆՉԵցան յայնոսիկ կողմանց։ Իսկ Մէլիք Մանսուր տիրեաց նաեւ Սիդոնի եւ Պերութի. մարտ եւ ոստոտութեամբ ընդ Տիւրոս, և էառ զբովանդակ ծովեզերեայ քաղաքս և զամրոցս, եւ բնաջինջ եղարձ զիշխանութիւնս Լատինաց յայնոսիկ կողմանց (1291), յետ տիրելոյ նոցա ամս իբր 200, կամ ըստ այլոց 192։ Եւ 'ի սմին ժամանակի Լատին կրօնաւորք արտաքսեցան 'ի Սիօնէ։ Իսկ ինքն Մէլիք Մանսուր յետ առման Հռոմկլայի սպանաւ 'ի Դահիրէ քաղաքի, 'ի թուին Հիճրէթի ԿՂՓ (*)։

Յաւուրս Ստեփաննոսի Կաթուղիկոսի որ նստէր 'ի Հռոմկլայ, պատահեցաւ դարձեալ այլայլութիւն Զատկի, որ ասի ծագատիկ, յորմէ ծագեցաւ վէճ 'ի մէջ Հայոց և Յունաց յԵրուսաղէմ. Յոյնք արարին զԶատիկն միով եօթնեկաւ յառաջ, 'ի Ծաղկազարդին Հայոց։ Իսկ Հայք յետոյ ըստ սովորութեան իւրեանց։ Բայց յաշխարին Կիլիկիոյ տօնիցին զՊասէքն ընդ Յունաց։ Տես 'ի Գիրս Սարգիսեանոսի Օրբէլ. Գիրք։ Բ. 194։ (1292) և Հ. Մ. Զամչեան. Հատ։ Գ. 286։

(*) Զայս ամենայն ազէտս կատարածոց եւ աւերմանց 'ի մէջ բերէ Վահրամ սարկաւագ աշակերտ գոյն երիցանց 'ի յիշատակարանի մեկնութեան ծննդոց Փիլոնի Եբրայեցւոյ։ զոր օրինակեցի ասէ 'ի վայելուչն և 'ի միխիթարութիւն հոգւոյ և մարմնոյ 'ի ծոց մնուցչին խոյ աստուածաբնակ տաճարին Ս. Աստուածածնի և Ս. Փրկչի։ յանապատս Արմենի։ Եւ յետ այլոց բանից ասէ. և վասն անհանգուրժելի վրդովմանցս և խռովատ ատգնապս։ որ եհատ 'ի վերայ մեր .... զի յաճշտակեցին ըզյուսութիւն և զպարարտ մնան երկրիս մերոյ 'ի թուականիս ՉԽԷ. 747. (1298). յարամ եղեւ զաւ գրոցս։ եւ բազումք անկան 'ի սուր սուսերի և 'ի գերութիւն վարեցան .... : Աբդ զոյսպիսի չարաշշուկ և բազմավրդով ծանր ազէտի աւուրս։ Ես Վահրամ սարկաւագս ոչպէս մարթացից ճառել զիշատաւութիւնս .... : Եւ յետ այլոց բանից յիշէ զնոգեւոր հայրն և զաւետարանչն իւր զՍտեփաննոս գոյն երիցանց։